



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հունվարի 2012թ.

N 12-Ն

*ք.Երևան*

**ԱՌԱՔՎՈՂ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
(ՀԱՇՎԱՌՄԱՆ) ԳՐՔԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐՈՇՄԱԿՆՔՄԱՆ  
ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 4-ով սահմանված «Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) կարգի» 9-րդ կետին համապատասխան

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հաստատել՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքի հարկային մարմնում հաշվառման և դրոշմակնքման հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն  
առընթեր պետական եկամուտների կոմիտեի  
նախագահ**

**Գ. Խաչատրյան**



ՀԱՅՏ  
ԱՌԱՔՎՈՂ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
(ՀԱՇՎԱՌՄԱՆ) ԳՐՔԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐՈՇՄԱԿՆՔՄԱՆ

<p><b>Փաստաթղթի հերթական համարը</b> N _____ (լրացվում է հարկային (փարածքային) տեսչության կողմից)</p>	<p><b>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի</b> _____ <b>հարկային (փարածքային) տեսչության պետ</b> _____</p>
<p>(հարկ վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը, կազմակերպական-իրավական ծևը)</p>	
<p>(հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), հարկ վճարողի բնակության կամ գտնվելու վայրը) <b>Խնդրում եմ հաշվառել և դրոշմակնքել առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գիրքը (գրքերը).</b></p>	
<p>(առաքման վայրը կամ տրանսպորտային միջոցի անվանումը, մակնիշը և պետական համարանիշը) <b>Նշված առաքման վայրերի կամ կետերի համար նախկինում հաշվառված և դրոշմակնքված գիրք՝</b></p> <ol style="list-style-type: none"><li><b>1. Չեմ ստացել</b> (ընդգծել)</li><li><b>2. Ստացել եմ հետևյալ առաքման վայրերի կամ կետերի համար</b></li></ol>	
<p><b>Կից ներկայացնում եմ նաև լրացուցիչ փաստաթղթեր՝</b></p>	
<p>(նշվում են կից ներկայացվող փաստաթղթերի անվանումները և քանակը) <b>Հարկ վճարողի պաշտոնատար կամ լիազորված անձ՝</b></p>	
<p>(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)</p>	

